Հավելված
ՀՀ կառավարության 2013 թվականի
ապրիլի 11-ի N 363 - Ն որոշման

# Կ Ա Ր Գ

## ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների (այսուհետ՝ հուշարձաններ) պետական կադաստրի կազմման ու ներդրման հետ կապված հարաբերությունները:

2. Հուշարձանների պետական կադաստրի կազմումը համակարգի ձևավորման և գործունեության ապահովման համար անհրաժեշտ նախապայմանների, ցուցանիշների և բաղադրիչների սահմանումն է:

3. Հուշարձանների պետական կադաստրը կազմվում է Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության միջնաժամկետ և տարեկան ծրագրերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին:

4. Հուշարձանների պետական կադաստրի կազմումը ներառում է՝

1) հուշարձանների վերաբերյալ միասնական տվյալների (տարածական և հատկանիշային) շտեմարանի ստեղծումը, վերլուծությունը, դասակարգումը և վարումը.

2) տվյալների հավաքագրման, պահպանման և թարմացման անընդհատության ապահովումը.

3) հուշարձանների վերաբերյալ տեղեկատվության կառավարման և տրամադրման գործընթացների ավտոմատացումը:

5. Հուշարձանների պետական կադաստրի կազմման համար որպես ելակետային տվյալների և տեղեկատվության հիմք են հանդիսանում՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի փետրվարի 5-ի N 104-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով սահմանված՝ հուշարձանների պետական հաշվառման փաստաթղթերը.

2) այլ պետությունների տարածքներում գտնվող հայկական հուշարձանների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը.

3) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը:

6. Հուշարձանների կադաստրի ներդրումը կադաստրի վարումն ապահովելու համար անհրաժեշտ միջոցառումների և դրանց փուլերի սահմանումն ու իրականացումն է:

7. Հուշարձանների կադաստրի ներդրման փուլերն են՝

1) կադաստրի վարումն ապահովող նորմատիվ իրավական ակտերի, կազմակերպամեթոդական փաստաթղթերի, տեղեկատվության տրամադրման ստանդարտների, հուշարձանների դասակարգիչների մշակումը.

2) տվյալների շտեմարանների սկզբնական հաշվառման նյութերի հավաքագրումը, դասակարգումը և ընդգրկումը գրանցամատյաններում.

3) կադաստրի վարման ավտոմատացված համակարգի ծրագրային, տեխնիկական և տեխնոլոգիական ապահովման մշակումն ու ներդրումը.

4) սկզբնական հաշվառման նյութերի ներածումը կադաստրի վարման ավտոմատացված համակարգ, համակարգի գործարկում:

8. Հուշարձանների կադաստրի ներդրման հիմնական միջոցառումներն են՝

1) իրավական ակտերի մշակման ապահովումը.

2) տվյալների շտեմարանի ձևավորումը.

3) ծրագրային ապահովումը.

4) տեխնիկական ապահովումը.

5) տվյալների փոխանակման համակարգի գործարկումը.

6) կադրերի պատրաստումը (վերապատրաստումը):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ